

**KOMITAS**  
SALON FUNÉRAIRE

**Entrusted for over 25 years**

Journey Home™ coverage included with new pre-arrangement contracts\* (\$565 value)

www.komitas.ca (514) 331-0400

## «ՀՕՄ-ը միշտ արցախահայության կողքին է».

ՀՕՄ-ի Կեդրոնական վարչութեան անդամ Արմինէ Կարապետեան եւ Գանատայի Շրջանային վարչութեան ատենապետ Լուսին Ժամկոչեան կը զեկուցեն Արցախահայութեան ուղղուած ՀՕՄ-ի ծրագիրներուն մասին.

«Հորիզոն»-ի գլխավոր խմբագիր Վահագն Գարազեան զրոյց ունեցաւ ՀՕՄ-ի Կեդրոնական վարչութեան անդամ Արմինէ Կարապետեանի եւ Գանատայի Շրջանային վարչութեան ատենապետ Լուսին Ժամկոչեան Փալանճեանի հետ, որուն ընթացքին ՀՕՄ-ի ներկայացուցիչները անդրադարձան վերջին շրջանին ի գործ դրուած նոր ծրագիրներուն:



Կարդալ էջ 5

## ԵՄ գործադիր իշխանութիւնը չի կարող անվերջ հաշուի չառնել Եւրոպական խորհրդարանի կարծիքը. Գասպար Կարապետեան

«ԵՄ գործադիր իշխանութիւնը չի կարող անվերջ հաշուի չառնել Եւրոպական խորհրդարանի կարծիքը», ըսած է Գասպար Կարապետեան:

Եւրոպական խորհրդարանը Հոկտեմբերի 24-ի իր լիազուցումը նիստում ընդունել է «Ատրպէյճանում տիրող իրավիճակի, մարդու իրաւունքների եւ միջազգային իրաւունքի խախտման ու Հայաստանի հետ յարաբերութիւնների մասին» բանաձեւը՝ 453 կողմ, 31 դէմ, 89 ձեռնպահ յարաբերակցութեամբ:Այս

ԵՄ ... Ծար. էջ 4



## Մենք կորցնում ենք մեր յաղթաթղթերը, եթէ Սիւնիքի մասով էլ կորցնենք աշխարհաքաղաքական բախում է տեղի ունենալու. Արմէն Ռուստամեան

«Թէ՛ Թուրքիան, թէ՛ Ատրպէյճանը մինչեւ իրենց ուզածը չստանան, յարաբերութիւններ չեն կարգաւորի». այսօր ԱԺ-ում լրագրողների հետ ճեպագրոյցի ընթացքում ասաց ՀԹԴ Բիւրոյի քաղաքական ներկայացուցիչ, «Հայաստան» խմբակցութեան պատգամաւոր Արմէն Ռուստամեանը:

«Ամէն ինչ տեղի է ունենում կուլիսների հետեւում, հանրութիւնը միշտ վերջին պահին է իմանում եւ կանգնում

Ռուստամեան... Ծար. էջ 5



## Մոնթրէալի մէջ տեղի ունեցաւ Ծոմէտի շրջանի երեսփոխան Սոնա Լախոյեան Օլիվիէ կազմակերպած աշնանային նուիրահաւաքը

17 Հոկտեմբեր 2024-ին, Քեպէզի խորհրդարանի անդամ, Ծոմէտի շրջանի երեսփոխան Սոնա Լախոյեան Օլիվիէ հիւրընկալեց մօտ 300 նուիրատուներ, իր կազմակերպած աշնանային նուիրահաւաքին, առ ի զօրակցութիւն իր յառաջիկայ նախընտրական քարոզարշաւին:

Միջոցառումը կայացաւ ջերմ եւ տօնական մթնոլորտի մէջ, որուն ներկայ էին համայնքի անդամներ եւ քաղաքական գործիչներ, ինչպէս՝ Քեպէզի Ազատական կուսակցութեան ղեկավար

Լախոյեան... Ծար. էջ 7



## Արցախի Ժողովուրդի Հիմնարար Իրաւունքներու Պաշտպանութեան յանձնախումբը կ'ողջունէ Եւրոպական Խորհրդարանի Բանաձեւին որդեգրումը

Արցախի ժողովուրդի հիմնարար իրաւունքներու պաշտպանութեան յանձնախումբը հրապարակած է հետեւեալ հաղորդագրութիւնը վերջերս Եւրոպական խորհրդարանին Ատրպէյճանի, Հայաստանի եւ Արցախի վերաբերեալ որդեգրած բանաձեւին մասին.

«Մենք ողջունում ենք Եւրոպական խորհրդարանի 24 Հոկտեմբերի 2024 թուականին «Ատրպէյճանում իրավիճակը, մարդու իրաւունքների եւ միջազգային իրաւունքի խախտումները եւ յարաբերութիւնները Հայաստանի հետ» բանաձեւը, որը բացայայտում է մարդու իրաւունքների սարսափելի վիճակը Ատրպէյճանում, միջազգային իրաւունքի անտեսումը եւ տարածաշրջանում ու Հայաստանի նկատմամբ յարձակողապաշտ, ուղղմտեղ վարքագիծը:

Մենք յատուկ ողջունում ենք Եւրոպական խորհրդարանի կողմէ միջազգային դատարանի որոշումների ամբողջական իրականացման, Արցախի ժողովրդի ներկայացուցիչների հետ կառուցողական երկխօսութեան մէջ ներգրաւուելու վերաբերեալ, ինչը կ'ապահովի նրանց անվտանգ, արժանապատիւ եւ արագ վերադարձն իրենց պատմական հայրենիք, Ատրպէյճանում պահուող բոլոր հայ գերիները եւ քաղաքական բանտարկեալների ազատ արձակում եւ հայկական գոյքի ու մշակութային յուշարձանների պահպանութիւնը: Արցախի ժողովրդի համախմբուած վերադարձն իրենց հայրենիք՝ Ատրպէյճանի եւ Արցախի ներկայացուցիչների միջեւ իսկական բանակցութիւնների միջոցով, կարելոր է Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ տեւական խաղաղութեան հաստատման համար:

Մենք յորդորում եւ յուսով ենք, որ նաեւ Եւրոպական Միութիւնը ջանքեր կը գործադրի՝ այս կարեւոր բանակցութիւնների մեկնարկի համար հարթակ ապահովելու նպատակով՝ երաշխաւորելով, որ գործընթացը լինի միջազգային վերահսկողութեան ներքոյ: Եւրոպական Միութեան դերը կարեւոր է երկխօսութեան խթանման եւ շարունակուող ճգնաժամի խաղաղ կարգաւորման մէջ՝ այդպիսով ճանապարհ բացելով Արցախի ժողովրդի անվտանգ, միջազգային երաշխիքներով վերադարձին՝ իրենց հիմնարար իրաւունքների լիակատար իրականացմամբ»:

ԱՐՑԱՒԻ ԺՈՂՈՎՐԴԻ ՀԻՄՆԱՐԱՐ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ

**MAZDA GABRIEL ANJOU**

**THE ALL-NEW 2024 MAZDA CX-5**

**Kevorg Asadourian**  
General Manager

7050, boul. Henri-Bourassa Est  
Anjou, QC H1E 7K7  
Tél. : 514 328-7777  
mazdagabrielanjou.ca





# Al-Nejmah

MIDDLE EASTERN SUPERMARKET

NOW OPEN  
**NOW OPEN**



Սեփականատեր  
Յարութ Միֆան

Ընտանեկան բացառիկ գործառնություն  
ուր կը գտնեք ձեր բոլոր կարիքները  
ուտելիքներու վերաբերեալ

## IN HOUSE

COFFEE ROASTING & GRINDING  
ROASTING FRESH NUTS  
SESAME GRINDING TO MAKE FRESH TAHINA  
TANOOR BREAD & IRAQI SAMOON

Մուրճ աղալ եւ խարկել  
Հնտեղին աղալ օրական դրութեամբ  
Շուշմայ աղալ եւ թահինի պատրաստել  
Թոնիթի հաց եւ իրաքեան սոմոն

Supermarket | Restaurant | Bakery | Halal Butcher  
Վաճառատուն, ճաշարան, փուռ, մսավաճառ

PHONE: 289.232.1200  
3085 Hurontario St, Unit 1-6, Mississauga





# «Մեր փափաքն է, որ Օթթաուայի ՀՄԸՄ-ի նորաստեղծ միաւորը համայրուի սկաուտական շարքերով եւ մասնաճիւղի վերածուի»։ Հարցազրոյց ՀՄԸՄ-ի Գանատայի Երջանային վարչութեան ատենապետ Մանուէլ Քեօուէանի հետ

Վերջերս Օթթաուայի մէջ հիմնարկէք կատարուեցաւ ՀՄԸՄ-ի Օթթաուայի միաւորին, որով ՀՄԸՄ-ի Գանատայի կառոյցի 6 մասնաճիւղերն ու 1 միաւորը համալրուեցան նոր միաւորով մը, յետագային գաղութի մեր ժողովուրդին ջանքերով՝ մասնաճիւղի վերածուելու ակնկալութեամբ։ Այս առթիւ եւ ՀՄԸՄ-ի Գանատայի Երջանային իրագործած ծրագիրներուն մասին «Հորիզոն» հարցազրոյց մը ունեցաւ ՀՄԸՄ-ի Գանատայի Երջանային վարչութեան ատենապետ Մանուէլ Քեօուէանի հետ, զոր կը հրապարակեմք ստորեւ։

Հ.- Ի՞նչ է ՀՄԸՄ-ի հիմնական առաքելութիւնը աշխարհի տարածքին ընդհանուր առմամբ, Գանատայի տարածքին մասնաւորաբար։

Մ.Ք.- ՀՄԸՄ-ի նպատակը հիմնադրուածէն մինչեւ օրս միշտ նոյնն է եղած է՝ հայ երիտասարդները համախմբել եւ փոխանցել իրենց մարմնական եւ բարոյական դաստիարակութիւն, որպէսզի այս երիտասարդները ըլլան նախ տիպար հայեր, ապա տիպար քաղաքացիներ իրենց ապրած երկիրներուն մէջ՝ Սփիւռքի թէ՛ Հայաստանի։ ՀՄԸՄ-ը ունի իր մարզական եւ սկաուտական խումբերն ու փողերախումբը, որոնց միջոցաւ կը փորձենք ներկայ եւ ապագայ սերունդները հայ իրականութեան մէջ պահել եւ քաջալերել, որ չայլասերին։ Մեր հաւաքավայրերը ակուստիկներն ու մեր մարզադաշտերն են։

Սկաուտականը ունի իր դաստիարակչական յատուկ ծրագիրը, որոնք կ'իրականանան մեր անդամներուն ներքինով կամ հիւր դասախօսներու միջոցաւ, եւ որով կ'ունենանք վկայեալ կարգեր, ասոր հետ զուգահեռ կը փոխանցուի իրենց հայապահպանման ծրագիր՝ պատմական, հայկական կամ կրօնական թեմաներով։

Մարզական խումբերը եւս ունին դաստիարակչական ծրագիր, որ կը փոխանցուի մեր մարզիչներուն կողմէ, որուն միջոցաւ ՀՄԸՄ-ի արժէքները կը փոխանցուին մեր մարզիկներուն, յատկապէս երբ կը համախմբուինք մարզական խաղերուն ընթացքին՝ նահանգային թէ՛ համագանատական, որովհետեւ մեր մարզիկները նոյնքան ՀՄԸՄ-ական են, որքան մեր սկաուտները։

Հ.- Քանի՞ մասնաճիւղ ունի ՀՄԸՄ-ը Գանատայի մէջ, մօտաւորապէս քանի՞ անդամ կը հաշուէ եւ Գանատայի Երջանային վարչութիւնը տարեկան ի՞նչ ծրագիրներ կ'իրականացնէ։

Մ.Ք.- Ընդհանուր պատկեր մը տալու համար ՀՄԸՄ համաշխարհային կառոյցին մասին ըսեմ, որ ՀՄԸՄ-ը ունի 26 շրջաններու մէջ 117 մասնաճիւղ եւ մեկուսի միաւորներ, որոնք 26,000 անդամ կը հաշուեն։ Գանատայի տարածքին ՀՄԸՄ-ը կը ունի մօտաւորապէս 2000 գործուն անդամ, 6 մասնաճիւղեր՝ Մոնթրէալ եւ Լաւալ Քեպէզ նահանգին մէջ, Թորոնթօ, Գեմպրիճ, Սենթ Գաթրինգ եւ Համիլթըն Օնթարիոյ մէջ, 1 միաւոր ունինք Վանկուվըրի մէջ, իսկ վերջերս ալ նորաստեղծ մեր միաւորը հիմնուեցաւ Օթթաուայի մէջ։

Քաղով Շրջանային վարչութեան ծրագիրներուն. նահանգային, միջմասնաճիւղային, համագանատական, համաՀՄԸՄ-ական կամ համահայկական բոլոր ծրագիրները՝ բանակումներ թէ՛ մարզական խաղեր, մեր պատասխանատուութեան ծիրին մէջ կ'ըլլան, որոնց համար մեր մասնաճիւղերէն առաւելագոյն մասնակցութիւն կը փորձենք ապահովել։ Մեր մասնաճիւղերն ու միաւորները կը կատարեն

առեւծի բաժինը՝ իրենց ժողովներով ու հաւաքներով, մարզական խումբերով փորձերով եւ այլն։ Գործունէութեան առումով Շրջանայինը կը ծրագրէ, բայց ունինք մեր յանձնախումբերը, որոնք գործնական գետնի վրայ աշխատանքը կը տանին. ունինք Շրջանային Սկաուտական խորհուրդը, Շրջանային Մարզական յանձնախումբը, քարոզչական կապի պատասխանատուներ, «Մարզիկ» պարբերականի կապի պատասխանատու, IT-ի եւ Database-ի պատասխանատու եւ այլն։ Շրջանը նաեւ օժտուեցաւ իր ընդհանուր խմբագրատով (ընդհանրապէս չենք ունեցած)՝ եղբայր Արուշ Գեղպէրեան, եւ շրջանային 2 խմբագրատներով, մէկը Մոնթրէալէն՝ եղբայր Ռաֆֆի Դաւիթեան, իսկ միւսը Օնթարիոյէն՝ քոյր Կասիա Կիւլեան Կարապետեան։

Շրջանայինը, որպէս նորութիւն, անցեալ տարի ծրագրած էր իրագործել «Բնապահպանութեան օր», որպէսզի մեր նոր սերունդը գիտակցի բնութեան պահպանման կարեւորութեան։ Այս տարի Գանատայի մեր բոլոր միաւորներն ու մասնաճիւղերը իրենց շրջաններուն մէջ իրականացուցին այդ ծրագիրը, որ պիտի դառնայ տարեկան ծրագիր։

Քեպէզի եւ Օնթարիոյի մեր խմբագրատներուն եւ աւագ երէցներուն յատուկ կրօնական դաստիարակչական ծրագիր մըն ալ ունինք, որ կը պատրաստուի Գանատայի Հայոց Թեմի Առաջնորդարանին, Գերշ. Տէր Բարդէ Արք. Չարեանի եւ Հոգ. Տէր Յակոբ Վրդ. Եպիսկոպոսի կողմէ։ Անցեալ տարուան մասնակից 86 սկաուտները, քանի մը ամսուան վրայ երկարող դասընթացքի աւարտէն ետք, այս տարի ստացան «Ղեկնող Երէց» շքանշաններ՝ Գանատայի Հայոց Թեմի Առաջնորդարանին կողմէ։ Դասընթացքը հերթական է, երկամեայ դրութեամբ, եւ յառաջիկային պիտի ընդլայնուի այսինքն միայն դաստիարակչականով պիտի չսահմանափակուի, այլ պիտի ընդգրկէ գործնական բաժին ալ՝ եկեղեցւոյ ծառայութեան ոլորտէն ներս։

ՀամաՀՄԸՄ-ական խմբագրատներուն ժողովը վերջերս տեղի ունեցաւ Գահիրէի մէջ, որուն մասնակցեցան մեր ընդհանուր խմբագրատն ու Շրջանային խմբագրատը։

Յառաջիկայի մեր ծրագիրներուն առնչութեամբ ըսեմ, որ Նոյեմբերի վերջաւորութեան մեր տարեկան համագանատական 51-րդ մարզախաղերը տեղի պիտի ունենան, Գեմպրիճի մէջ, որոնց հիւրաբար պիտի մասնակցին նաեւ Արեւելեան եւ Արեւմտեան Միջուկային Նահանգներէն։ Այս մէկը կրնամ ըսել, որ երիտասարդներու մասնակցութեան առումով մեր մեծագոյն միջոցառումն է։ Անցեալ տարի, օրինակ, Մոնթրէալի մէջ աւելի քան 400 մարզիկ մասնակցեցան։

Մարզական համաՀՄԸՄ-ական խաղերը Հայաստանի մէջ տեղի պիտի ունենան 2025-ին Յուլիս 24-էն մինչեւ Օգոստոս 2։ Գանատան ունի նաեւ միջմասնաճիւղային համագանատական բանակումը, Օնթարիոյի շրջանին հիւրընկալութեամբ։ Յամաքամասային բանակում մըն ալ տեղի պիտի ունենայ 2025-ի ամբար, որուն պիտի մասնակցին Ամերիկայի Արեւելեան եւ Արեւմտեան շրջանները, Գանատան, Հարաւային Ամերիկան եւ Աւստրալիան։

Քարոզչական առումով Շրջանայինը ունի դիմատետրի իր էջը, Instagram-ի էջն ու կայքէջը։ Իսկ ՀՄԸՄ-ի մեր պաշտօնաթերթը «Մարզիկ»ն է, որ եռամսեայ դրութեամբ կը հրատարակ-

ուի, եւ ով որ կ'ուզէ բաժանորդագրուիլ անոր, կրնայ Շրջանայինին դիմել, որպէսզի ստանայ տպագիր տարբերակը։

Քարոզչականը նաեւ ունի յետագայի ծրագիրներ, որոնց թիրախը պիտի ըլլան 18-35 տարեքներուն ՀՄԸՄ-ի շարքերուն մաս կազմած, ապա զանազան պատճառներով (անձնական, ընտանեկան կամ աշխատանքային) հեռացած են մեր մեծ ընտանիքէն։ Քարոզչականը նոր ծրագիրներներով պիտի փորձէ կրկին համախմբել զանոնք ՀՄԸՄ-ին շուրջ, ըլլայ վարչական գործերով կամ այլ ծրագիրներով, որպէսզի բոլորս ալ օգտուելունք անոնց փորձառութիւններէն։

Հ.- Սեպտեմբեր 22-ին Օթթաուայի մէջ նոր մասնաճիւղի մը հիմնադրումը յայտարարուեցաւ. ի՞նչ նախապայմաններ տեղի տուին այս ողջունելի ծրագրին, եւ ի՞նչ կ'ակնկալուի Օթթաուայի հայ գաղութէն այս առնչութեամբ։

Մ.Ք.- Օթթաուայի մէջ գործող մեր քոյր միութիւններուն կողմէ միշտ ալ ակնարկութիւններ եղած են ՀՄԸՄ-ի մասնաճիւղ հիմնելու այնտեղ։ Այս տարի Շրջանայինին ներկայացան խումբ մը երիտասարդներ, որոնք արդէն մարզական խումբեր կազմած են եւ փորձեր կ'իրականացնեն, Օթթաուայի գաղութին մէջ ապրող մեր վեթեւաններէն ոմանց աշակցութեամբ, եւ փափաք յայտնեցին, որ ՀՄԸՄ-ի ընտանիքին միանան։ Մենք այս մէկը անշուշտ մեծ խանդավառութեամբ ընդունեցինք եւ Կեդրոնականի վաւերացումով կրցանք արտօնութիւն ստանալ հիմնելու համար միաւորը։ Պաշտօնական հանդիսութիւնը եւ բացումը տեղի ունեցաւ Սեպտեմբեր 22-ին, Օթթաուայի մէջ, որուն ընթացքին նաեւ յիշատակուեցաւ Հայաստանի անկախութեան տօնը։ Մեր փափաքն է, որ այդ վարչական խումբը մեր նեցուկով եւ ամենակարեւորը՝ տեղոյն մեր ժողովուրդին նեցուկով, խումբեր կազմեն, փորձեր եւ հաւաքներ կազմակերպեն, համագանատական մեր խաղերուն կարենան մասնակցիլ, եւ մենք վստահ ենք, որ երբ մեր ժողովուրդը տեսնէ, թէ գաղութին մէջ ներկայութիւն է այլեւս ՀՄԸՄ-ը, անդամագրութիւնը կը բազմանայ եւ կարեկիւթիւնը կը ստեղծուի



սկաուտական շարքեր կազմելու եւ յետագային մասնաճիւղի վերածուելու։

Հ.- Ի՞նչ մարտահրաւերներ կը դիմագրաւէ այսօր ՀՄԸՄ-ը Գանատայի տարածքին։

Մ.Ք.- Մարտահրաւերները բազում են. նախ մեր տարածաշրջանային հարցը այն է, որ մեր գաղութները հեռու են իրարմէ, ինչ որ դժուարութիւն կը ստեղծէ միասնաբար գործելու, բայց այսօրուան դրութեամբ երբ կան արդիական հաղորդակցութեան միջոցները, կրնամ ըսել որ դիւրացած է մեր հաղորդակցութիւնն ու կապերը ամրապնդուած են։

Բոլոր միութիւններուն նման անտարբերութեան հարցը առկայ է, նոյնիսկ երբեմն ոմանք կ'անդամագրուին, բայց որոշ տարիք մը ետք կը սկսին հեռանալ մեր շարքերէն, անձնական թէ՛ ընտանեկան զանազան պատճառներով, հետեւաբար մեր մարտահրաւերներէն մէկը կը հանդիսանայ զանոնք ներգրաւել։

Ունինք նաեւ մարզիչներու վերաորակաւորման հարցը. մեր մարզիչները կամաւորաբար կու գան եւ կը գործեն, բայց մենք կ'ուզենք անոնց մակարդակը բարելաւել եւ արհեստավարժ մարզիչներ ունենալ, հետեւաբար մարզիչներ պատրաստող մասնագէտներ (վճարովի թէ՛ կամաւոր) ներգրաւելու հարց ունինք, որպէսզի մեր մարզիկներուն ակնկալութիւնները բաւարարենք եւ մեր լաւագոյնը մատուցենք իրենց։

Հարցազրոյցը վարեց Սոնա Թիթիզեան Կէտիկեան

### Կեանքէն հեռացաւ ֆրանսահայ վաստակաշատ երաժշտագէտ, յորինող եւ խմբավար Կարպիս Ափրիկեանը

Ֆրանսայի մէջ կեանքէն հրաժեշտ առած է վաստակաշատ երաժշտագէտ, յորինող ու խմբավար Կարպիս Ափրիկեանը, 98 տարեկանին։ Այս մասին կը հաղորդէ «Նոր Յառաջ» թերթը։

Խմբավար Կարպիս Ափրիկեանի տասնամեակներու վաստակը անկարելի է ամփոփել քանի մը սեղմ տողերով մէջ։ Հոս պիտի գոհանանք միայն յիշեցնելով, թէ անոր անունը եւ յիշատակը անքակտելի պիտի մնան «Սիփան-Կոմիտաս» երգչախումբէն, որուն խմբավարութիւնը ստանձնած էր երկար տարիներ եւ մասնաւորապէս զայն հասցուցած էր այն բարձունքին, որուն վրայ անիկա կը գտնուի այսօր։ Ափրիկեանի անունը պիտի յիշատակուի նաեւ «Սասունցի Դաւիթի Ծնունդը» դիւցազներգութեամբ՝ իր ամէնէն կարեւոր յորինումը, ի շարս այլ բազմաթիւ ստեղծագործութիւններու։

Յիշեցնենք, թէ տակաւին քանի մը օր առաջ, Փարիզի քաղաքապետարանը իր հեղինակաւոր «Վերմէյլ» շքանշանով պարգևատրած էր վաս-



տակաշատ վարպետը։ Կարպիս Ափրիկեան (1926, Աղեքսանդրիա, Եգիպտոս - 15 Հոկտեմբեր 2024, Մալակոֆ) ֆրանսահայ երաժշտական, խմբավար, Փարիզի «Սիփան-Կոմիտաս» երգչախումբի երկարամեայ ղեկավար։ 57 տարի իր ուսերուն վրայ կրած է «Սիփան-Կոմիտաս» եւ հասցուցած է անհամար երգիչներ, յորինած է երգեր, օրաթորիւններ։



# Մոնթրեալի մէջ տեղի ունեցաւ ընդունելութիւն՝ ի պատիւ «Runners for Armenia» վազքարշաւի նուիրատուներուն

Կազմակերպութեամբ ՀՕՄ-ի Գանատայի Երջանային վարչութեան, Հինգ-շաբթի, 17 Հոկտեմբեր 2024-ին, երեկոյեան ժամը 7-ին, Մոնթրեալի Հայ Կեդրոնի «Արթո եւ Ալիս Մարգարեան» ճաշարահանոցում «Runners for Armenia» վազքարշաւի նուիրատուներուն, ներկայութեամբ ՀՕՄ-ի Կեդրոնական վարչութեան անդամ եւ Գանատայի ներկայացուցիչ Արմինէ Կարապետեանի, Երջանային եւ տեղական վարչութեան ներկայացուցիչներու եւ անդամներու:

ՀՕՄ-ի Գանատայի Երջանային վարչութեան անունով բարի գալուստի խօսք արտասանեց Մոնթրեալի «Սօսէ» մասնաճիւղի անդամ եւ «Runners for Armenia» ծրագրի յանձնախումբի անդամ Անի Թաշճեան, որ ֆրանսերէն եւ հայերէն իր խօսքին մէջ ներկայացուց մոնթրեալահայ երկու հայ երիտասարդները՝ Շանթ Շահինեանն ու Արէն Իմամէճեանը, որոնց մտայնացումն էր այս ծրագրին ու անոր հասոյթի տրամադրումը ՀՕՄ-ի Հայաստանի Ախտերեանի «Մօր ու Մանկան» Առողջապահութեան կեդրոնին համար խիստ անհրաժեշտ կրօնաշնորհակարային (mammography) նոր սարքի գնման: Շանթ Շահինեանը (26 տարեկան), որ Université de Montréal համալսարանին մէջ ատամնաբուժութիւն կ'ուսանի, եւ Արէն Իմամէճեանը (22 տարեկան), որ Գոնգորտիա համալսարանի John Molson բաժանմունքին մէջ կը հետեւի տնտեսագիտութեան, յաճախած են Մոնթրեալի Սուրբ Յակոբ Ազգային վարժարանը, մաս կը կազմեն ՀՄԸՄ-ի սկստական շարքերուն եւ Համազգայինի «Անի» պարաօլիմպիկները: Ապա Թաշճեան հրաւիրեց զոչ երիտասարդները փոխանցելու իրենց սրտի խօսքը:

Իմամէճեան եւ Շահինեան ընդհանուր ակնարկ մը տուին ծրագրին մտայնացման ու ծրագրաւորման գործընթացին մասին, թէ ինչպէս փափաքեցան վազքարշաւի իրենց մասնակցութիւնը ծառայեցնել ազգօգուտ ծրագրի մը եւ այդ նպատակաւ դիմեցին ՀՕՄ-ին, որուն հետ գործակցութիւնը, ինչպէս ըսին, հոգեպարար փորձառութիւն մը դարձած էր իրենց համար: Անոնք յայտնեցին, թէ ՀՕՄ-ը անմիջապէս նեցուկ կանգնած եւ աջակցութիւն ցուցաբերած էր իրենց եւ ծրագրին:

Անկէ ետք ցուցադրուեցաւ ՀՕՄ-ի Կեդրոնական վարչութեան կողմէ պատրաստուած երկու տեսերիկներ՝ ՀՕՄ-ի Հայաստանի Ախտերեանի «Մօր ու Մանկան» Առողջապահութեան կեդրոնին մասին, որ կը ծառայէ Երբակի մարզին ու անոր շրջակայքի մեր հայրենակիցներուն, նաեւ կեդրոնի փոխ տնօրէնին շնորհակարկական խօսքը:

Ելոյթ ունեցաւ ՀՕՄ-ի Կեդրոնական վարչութեան անդամ Արմինէ Կարապետեան, որ բարձր գնահատեց նախաձեռնութիւնը կազմակերպող երկու երիտասարդներուն տարած տքնաջան եւ կազմակերպուած լուրջ աշխատանքը: Ան մեծապէս արժեւորեց բոլոր նուիրատուներուն առատաձեռն մասնակցութիւնը, առանց որոնց կարելի պիտի չըլլար այս ծրագիրը յաջողութեամբ պսակել: Կարապետեան յայտնեց, որ կրօնաշնորհակարային նոր սարքի գնման ու առաքման գոր-



ծընթացը արդէն սկիզբ առած ու կանխավճարը վճարուած է եւ կը նախատեսուի, որ 6 ամիսէն կեդրոնը ստանայ զայն, եւ որուն մասին տեսանիւթով մը դարձեալ պիտի զեկուցուի նուիրատուներուն:

Շնորհակալական խօսքով հանդէս եկաւ ՀՕՄ-ի Գանատայի Երջանային վարչութեան ատենապետ Լուսին Փալանճեան, որուն մէջ խօսքը նախ ուղղուած էր նուիրատուներուն՝ ըսաւ. «Այսօր դուք արժանի էք արդարօրէն հպարտանալու, քանի որ տուիք ձեր սրտէն եւ հոգիէն փրկելու համար հայ մայր մը կամ կին մը» ապա աւելցուց. «Շնորհակալական յատուկ խօսք ունիմ յատկապէս մեր այս կենսունակ երկու հայ երիտասարդներուն, որոնք ծրագրին կերպով աշխատեցան անցնող ամիսներուն եւ իրենց անխնայ աշխատանքին եւ անսակարկ նուիրումին շնորհիւ 62 000 տոլար յաջողեցան հաւաքել: Շնորհակալական խօսք ունինք յատկապէս տէր եւ տիկին Արա եւ Մարալ Իմամէճեաններուն եւ իրենց դստեր՝ Կարինին, որոնք ճիշդ եւ միջոց չխնայեցին աջակցելու այս մեծ գործի յաջողութեան: Անոնք անկախ իրենց կատարած մեծագումար նուիրատուութենէն, վազքի մրցումի շապիկներ նուիրեցին վազողներուն եւ բարոյական զօրակցութիւն ցուցաբերեցին ծրագրի ծնունդէն մինչեւ աւարտը»:

Աւարտին ՀՕՄ-ի Երջանային վարչութեան կողմէ յուշանուէրներ յանձնուեցան Շանթ Շահինեանի եւ Արէն Իմամէճեանի, որոնք իրենց կարգին շնորհակալական բացիկներ պատրաստած էին ու բաժնեցին ներկաներուն:

Սոնա Թիթիզեան Կէտիկեան

## ԵՄ... Սկիզբը էջ 1

քուէարկութեանը երկու օր առաջ նախորդել էր այդ թեմայով խորհրդարանական քննարկում:

Բանաձեւի նախաբանում Եւրոպական խորհրդարանը գտնում է, որ Ատրպէյճանի կողմից մարդու իրաւունքների շարունակական խախտումներն անհամատեղելի են այդ երկրում COP-29-ի անցկացման հետ, ապա ԵՄ-ին եւ նրա անդամ երկրներին կոչ անում ձեռնարկել հնարաւոր քայլեր, որպէսզի ՄԱԿ-ի Կլիմայի փոփոխութեան խորհրդատուները հետազոյում չանցկացուեն մարդու իրաւունքների պաշտպանութեան գործում վատ ցուցանիշներ ունեցող երկրներում:

Եւրոպական խորհրդարանն արձանագրում է Ատրպէյճանում մարդու իրաւունքների շարունակաբար վատթարացումը, միջազգային իրաւունքի կոպիտ խախտումները՝ այդ թւում Հայաստանի հանդէպ ազդեցիկ պահանջներ, քաղաքացիական հասարակութեան եւ լրատուամիջոցների նկատմամբ խիստ սահմանափակումները, Եւրոպական պաշտօնեաներին կաշառելու՝ «խաւարային դիւանադիտութեան» արատաւոր մեխանիզմները, 2023 թ. Լեռնային Ղարաբաղի անօրինական շրջափակումը, միջազգային իրաւունքի խախտմամբ իրականացուած բռնակառնումը, էթնիկ գտումները, 23 հայերի՝ այդ թւում Արցախի ռազմաքաղաքական ղեկավարութեան պատանդառումը, ՀՀ ինքնիշխան տարածքի օկուպացիան: Խորհրդարանը վերահաստատում է իր դիրքորոշումը, առ այն, որ ԵՄ-ն պէտք է պատրաստ լինի պատժամիջոցներ կիրառել ցանկացած ֆիզիքական անձի եւ կազմակերպութեան նկատմամբ, որը սպառնում է Հայաստանի ինքնիշխանութեանը, անկախութեանը եւ տարածքային ամբողջականութեանը:

Արդէն բանաձեւի բուն տեքստում խորհրդարանը, COP 29-ին ընդառաջ, խստօրէն դատաւարտում է Ալիբեի ռեժիմին, գործադիր իշխանութեանը կոչ է անում կասեցնել Ատրպէյճանի հետ էներգետիկ յուշագրերը: Եւրոպական խորհրդարանն Ատրպէյճանին յորդորում է դուրս բերել զինուած ուժերը ՀՀ ինքնիշխան տարածքից, դատաւարտում է Հայաստանի նկատմամբ ազդեցիկ, այդ թւում հիբրիդային յարձակումները, ողջունում է որոշ անդամ պետութիւնների կողմից Հայաստանին տրամադրուող պաշտպանական ռազմական օժանդակութիւնը:

Յատկապէս պէտք է ընդգծել Արցախի վերադարձի իրաւունքի իրացման հարցում Եւրոպական խորհրդարանի սկզբունքային ու հետեւողական դիրքորոշումը: Այս բանաձեւում եւս, յղում անելով Արդարադատութեան միջազգային դատարանի Նոյեմբերի 17-ի որոշմանը, Խորհրդարանը պահանջում է արցախահայութեան վերադարձի իրաւունքի իրացում, արցախահայութեան հետ անկեղծ ու թափանցիկ երկխօսութեան մեկնարկ՝ վերջիններիս իրաւունքների պաշտպանութեան համար երաշխիքների տրամադրման շուրջ: Խորհրդարանը պահանջում է հեռու մնալ սազրիչ հետտրամադրութիւնից եւ հայութեան հանդէպ խտրականութեան գրասեւրումներից:

Խորհրդարանը նաեւ պահանջում է Արցախի դէմ կատարուած պատերազմական յանցագործութիւնների անկախ հետաքննութիւն, ինչպէս նաեւ Արցախի գրաւումից յետոյ ձեռքազրկուած անձանց ազատ արձակում:

Յատուկ անդրադարձ կայ Արցախի պատմամշակութային ժառանգութեան պաշտպանութեանը, ինչի համատեքստում պահանջում է ԵՈՒՆԵՍԿՕ-ի համապատասխան առաքելութեան մուտքը տարածաշրջան:

Խորհրդարանը Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ տրանսպորտային կապուղիների վերականգնումը դիտարկում է բացառապէս ՀՀ ինքնիշխանութեան եւ տարածքային ամբողջականութեան շրջանակներում:

Մեկնաբանելով բանաձեւի ընդունումը՝ Հայ դատի Եւրոպայի գրասենեակի նախագահ Գասպար Կարապետեանը մասնաւորապէս նկատել է. «Այս բանաձեւի ընդունումը տրամաբանական շարունակութիւնն էր Եւրոպական խորհրդարանի նախկին բանաձեւերի եւ Հոկտեմբերի 22-ի քննարկման: Մենք շնորհակալ ենք Եւրոպական խորհրդարանի պատգամաւորներին, գնահատում ենք նրանց սկզբունքայնութիւնն ու հետեւողականութիւնը, ինչը, ցանկանում ենք հաւատալ, որ կը բերի նաեւ Ատրպէյճանի հետ ԵՄ գործադիր իշխանութեան քաղաքականութեան վերանայման:

Այս բանաձեւի մասով, յատուկ ցանկանում եմ կարեւորել, որ խորհրդարանը ԵՄ-Ատրպէյճան իրաւապայմանագրային յարաբերութիւնների հետազոյ գարգացման համար նախապայմաններ է սահմանում՝ մասնաւորապէս քաղաքացիական պայմանագրերի ազատ արձակումը, Հայաստանի հետ խաղաղութեան բանակցութիւններում անկեղծ պատրաստակամութեան գրասեւրում, ինչպէս նաեւ արցախահայութեան իրաւունքների յարգումը:

Ցանկանում եմ շեշտել՝ Ատրպէյճանի հետ Եւրոպական միութեան ենթադրեալ նոր համաձայնագրի վաւերացման հարցն ամբողջութեամբ Եւրոպական խորհրդարանի իրաւասութեան ոլորտում է, եւ այս հարցով գործադիր իշխանութիւնը կաշկանդուած է Եւրոպական խորհրդարանի դիրքորոշմամբ: Հետեւաբար, ԵՄ գործադիր իշխանութեան քաղաքականութեան զարգացումը որոշակի հանգրուանում կախուած է ինչիւր խորհրդարանի դիրքորոշումից, ուստի գործադիր իշխանութիւնը չի կարող անվերջ հաշուի չառնել խորհրդարանի կարծիքը: Մենք արդէն իսկ նշմարում ենք արտաքին գործողութիւնների Եւրոպական ծառայութեան կողմից Ատրպէյճանի հետ խոսոյթի որոշակի կոշտացում եւ մեզ համար ընդունելի օրակարգերի ներառում: ՀՅԴ Հայ դատի Եւրոպայի գրասենեակն այս ուղղութեամբ եւս շարունակելու է իր աշխատանքները»:

ՀՅԴ Բիւրոյի Հայ դատի կեդրոնական գրասենեակ  
24/10/2024 թ.

www.horizonweekly.ca

CONNECT WITH US:

- facebook.com/pages/horizonweekly
- @horizonweekly
- horizonweekly
- YouTube – Horizon Weekly TV







# Ժամանակաւոր պարտութիւններու էջը փակած ենք. ՀՅԴ Բիւրոյի ներկայացուցիչ Յակոբ Տէր Խաչատուրեանի խօսքը արտասանուած ՀՅԴ Աւստրալիոյ կառույցի հիմնադրութեան 60-ամեակին նուիրուած միջոցառման:

Գերաշնորհ Սրբազան Հայր, յարգելի վերապատուելի, հոգեւոր հայրեր, յարգարժան ազգային քաղաքական կուսակցութիւններու ներկայացուցիչներ, պատուարժան հիւրեր, սիրելի ընկերներ եւ հայրենակիցներ,

ՀՅԴ Բիւրոյի ընկերներս եւ ՀՕՄԻ կեդրոնական վարչութեան ատենապետուհին այս օրերուն ընթացքին կը գտնուինք Աւստրալիա, ոչ միայն մասնակցելու ժողովներու, հերթական հանդիպումներու եւ զեկուցելու մեր շարքերուն ու ժողովուրդին, այլ մեր մասնակցութիւնը բերելու նաեւ ՀՅԴ Աւստրալիայի աշխոյժ կառույցի հիմնադրութեան վաթսուամեակի նշումին: Արդարեւ՝ Աւստրալիոյ մեր շրջանը այսօր կարեւոր դերակատարութեան ունի արեւմտեան աշխարհի այս երկրէն ներս հայապահպանման ու հայակերտման, համայնքային կառոյցներու հաստատման եւ ամրապնդման, հայեցի դաստիարակութեան եւ երիտասարդութեան հայ կեանքի մէջ ներգրավման, հայ մշակոյթի տարածման ու հայ դատի բազմաշերտ գործունէութեան ոլորտներէն ներս. եւ ոչ միայն տեղական մակարդակով. Աւստրալիոյ շրջանը իր պատուաբեր մասնակցութիւնն է բերած, ու կը շարունակէ բերել, մեր համահայկական ու համասփիւռքեան նախաձեռնութիւններուն:

Մերելիներ, 1980ական թուականներու վերջերէն մինչեւ 2020-ի Սեպտեմբերը մենք ունեցանք անխոցելիութեան զգացում, որովհետեւ յաղթանակած ժողովուրդ էինք: Արցախը ազատագրուած էր, Հայաստանը՝ վերանկախացած, Ջաւախքը՝ աշխուժացած, Արեւմտեան Հայաստանի մէջ՝ զարթոյնքի ծիրեր արձակուած եւ Սփիւռքը՝ ունեցած հայ դատի կարեւոր ձեռքբերումներ համաշխարհային մակարդակով: Հայաստան-Արցախ-Սփիւռք եռամիասնութիւնը ամրապնդուած էր եւ ազգային օրակարգի հիմնական կէտերու շուրջ ալ համախոհութիւն ստեղծուած էր, մանաւանդ 2015ի հարիւրամեակի համախմբող մթնոլորտէն ետք:

Բնականաբար՝ ՀՅԴն իր առիւծի բաժինը բերած էր այդ իրագործումներուն մէջ ի դին մեծ գոհողութեանց. հազարաւոր նահատակներու արիւնքով նուիրականացած յաղթանակները, քաղաքական մեծ աշխատանքը, քարոզչական համագործած արշաւները եւ հայրենիքի ու Սփիւռքի տազնապահար շրջաններուն ուղղուած հսկայածաւալ օժանդակութիւնները տուած էին ակնկալուած արդիւնքը եւ կար համատարած լաւատեսութիւն: Համոզումի էր վերածուած նաեւ մեր այն կարգախօսը, որ յանձնառու Սփիւռքը լաւագոյն գրաւականն է հօր հայրենիքի:

Ամրապնդուած էին մեր ազգային արժանապատուութիւնը եւ ազգային իդէալներու հանդէպ մեր հաւատքը. ստեղծուած էր աննախընթաց համահայկական միասնականութիւն ի սպաս մեր հայրենիքին ու իտէալներուն. իսկ ներազգային տարածայնութիւններն ու Հայաստանի իշխանութիւններու բազմապիսի խարխալումները մանր անախորժութիւններ եւ սրբազրելի վրիպումներ կը թուէին ըլլալ մեծ պատկերին մէջ: Աղէտներու ու կորուստներու հարիւրամեակէ ետք, պայծառ դարաշրջան մը բացուած կը թուէր ըլլալ հայութեան առջեւ:

Գիտէք արդէն, որ Արցախի պատերազմի ընթացքին ամէն տարակարծութիւն մեկդի դրած, ՀՅԴն նուիրուած էր հայութեան յաղթանակը ապահովելու գործին՝ հիմնականին մէջ չորս ուղղութիւններով՝

- 1) հայրենիքի պաշտպանութեան համար տրամադրելով մարդոյժ կամաւորական պահեստազօրի ճամբով,
- 2) ստեղծելով քաղաքական համաշխարհային զօրաշարժ,
- 3) ձեռնարկելով համաշխարհային քարոզչական պայքարի ամենուրէք եւ
- 4) իսթանբուլ հայրենիքին համար հանգանակային համահայկական արշաւը եւ մասնակցելով աննախընթաց նիւթական կուռաններու ստեղծումին պատերազմին յաջող ելքին համար:

Ուստի հասկնալի էր, որ ազգովին ապրեցանք ահաւոր ցնցում երբ 2020-ի աշնան Արցախեան երկրորդ պատերազմին կրած պարտութիւնը ի յայտ եկաւ եւ խորտակեց անպարտելիութեան եւ անխոցելիութեան հանգանակը: Հիսթորիոյ ճիշդ էր մասնաւանդ երբ յաղթանակի կեղծ տպաւորութիւններ ստեղծած իշխանութիւններու շղարշը պատուեցաւ եւ մեր կորուստներու իսկական տարողութիւնը պարզուեցաւ 2020ի Նոյեմբեր 9-ին:

Ազգային նսեմացումի առաջնորդած ՀՀ ղեկավարը մերժեց ընդունիլ Արցախն ու Հայաստանը աղէտի առաջնորդած ըլլալու հանգամանքը, վճռեց ամէն գնով կառչիլ իր իշխանութեան աթոռին եւ ծնկաչոք դիմեց թշնամիներուն ազգովին մեզ նսեմացնող պար-

տուղական պայմաններու մէջ:

Այս մեծագոյն աղէտին առթած համատարած յուսահատութեան եւ ընկճուածութիւնը յառաջացուց նոյնիսկ խզում հայրենիքի եւ Սփիւռքի միջեւ: Եւ սկիզբ առաւ շարքը միակողմանի զիջումներու, որոնք մինչեւ օրս կը շարունակէ ՀՀ այս իշխանութիւնը՝ կեղծ «խաղաղութեան» օրակարգի պիտակին տակ:

Ուստի, բնական էր որ այս կացութիւնը առաջնորդէր ժողովրդային ցասումի. հայրենիքի փրկութեան շարժումները եւ ներկայի Սրբազան Պայքարը զօրաշարժի ենթակեցին հայրենի ժողովուրդի կարեւոր զանգուածը վերականգնելու համար ազգային գաղափարախօսութեան հիմքերու վրայ գործող պետութիւնը, բայց ՀՀ իշխանութիւնը ամէն ճիգ թափեց, եւ կը շարունակէ թափել, ապակողմնորոշելու եւ պառակտելու հայրենի ժողովուրդը. առաւել՝ այդ իշխանութիւնը ստեղծեց քաղաքական հալածանքներու մթնոլորտ եւ բռնատիրական ոստիկանապետութիւն:

ՀՅԴն եւ իր գործընկերները շարունակեցին ընդդիմադրութիւնը, բայց ժողովրդային հաւաքները չհասան այն թիւերուն, որպէսզի խարխիլ այս իշխանութեան հիմքը: Մենք շարունակելու ենք պայքարը, առաւել օտագործելու ենք ՀՀ ԱժԻ ազգեցիկ հարթակը մեր կեցուածքները ներկայացնելու եւ փորձելու կանխել միակողմանի նորանոր զիջումներ:

«Բաժնէ որ տիրես»ի քաղաքականութիւն որդեգրած ՀՀ իշխանութիւնը այսօր Սփիւռքն ալ պառակտելու սեւ գործին է լծուած: Մինչդեռ թշնամիներով շրջապատուած եւ մեծ հարուած ստացած մեր հայրենիքին համար աւելի քան երբէք անհրաժեշտ է ազգային գաղափարախօսութեան հիմքի վրայ համահայկական կուռ միասնականութիւն:

Այսօր, դէմ հանդիման կը գտնուինք նորագոյն մարտահրաւէրներու, որովհետեւ պարտուած ու հայկականութենէ դատարկուած Հայաստանի իշխանութիւնները հայրենի շահերը պաշտպանելու իրենց անկարողութիւնը բազմիցս փաստած են եւ դարձած ամէն տեսակի զիջումներու պատրաստ: Մարտահրաւէրներ ունինք նաեւ Սփիւռքի պարագային, ուր արդէն գործող կառոյցներու թարմացման, յաւելեալ աշխուժացման եւ աշխատելու արդիականացման կարիքները դարձած են հրամայական:

Մեր հայրենիքի առջեւ ցնուող գլխաւոր մարտահրաւէրները եւ ՀՅԴ դիրքորոշումները հինգ մասերու կարելի է բաժնել՝

Ա) Արցախ Արցախահայութիւնը վիրաւոր է այսօր. իր պայնական հողերը դատարկուած են եւ ժողովուրդը դարձած տարագիր. Սակայն, պիտի վերականգնի Արցախը. պիտի պայքարինք, որ Հայաստանը տէր կանգնի Արցախահայութեան իրաւունքներուն սատարելու իր պարտաւորութեան:

Մեր ներկայ շեշտաւորումները յստակ են՝ հաւաքական վերադարձի իրաւունք, Արցախի միջանկեալ կարգավիճակի ճշտում եւ վերջնական կարգավիճակի բանակցութիւններ, գերիներու եւ Պաքույի մէջ պահուող քաղաքական բանտարկեալներու ազատ արձակումը մշակութային ժառանգութեան ոչնչացման դէմ արշաւ, Ազգայնականի ցեղասպանական էթնիկ գտումի քաղաքականութեան քօղազերծում եւ Հայաստան ապստամբած Արցախահայութեան բազմազան կարիքներու օժանդակութիւն:

Մէկ խօսքով, մենք վստահ ենք, որ ոչ միայն պիտի վերականգնի Արցախը, այլեւ պիտի ծաղկի, հզօրանայ եւ վերջիվերջոյ միանայ մայր հայրենիքին:

Բ) Սահմանազատման ու սահմանազման գործընթաց

Բազմիցս յայտարարած ենք, որ ՀՀ իշխանութիւնները մեծ զգուշաւորութեամբ պարտին մօտենալ այս հարցին: Իրենց հոգեբանական ներկայ դրուածքով եւ միակողմանի զիջումներու ատակ այս իշխանութիւնները պարտին գտնել կամքը արմատականօրէն պաշտպանելու Հայաստանի սահմաններն ու հողային ամբողջականութիւնը: Առաւել՝ Հայաստանի գերիշխանութենէն ոչ մէկ զիջում ընդունելի է եւ կտրականօրէն մերժելի է այսպէս կոչուած «Ձանգեզուրեան միջանցք»ի հաստատման մեր թշնամիներու եւ այլոց պահանջները:

Գ) Հայաստան-թուրքիա յարաբերութիւններու կծիկ եւ խաղաղութեան կերծ օրակարգ

Անխոհեմ քայլ էր ՀՀ վարչապետի Հայաստան-թուրքիա յարաբերութիւններու բնականոնացման բանակցութեան յաւելալ ճակատ բանալը այս տազնապալի օրերուն, երբ առկայ են Հայաստանի անվտանգութեան խնդիրը եւ Ազգայնականի հետ բանակցութիւններու անլոյժ թնճուկը. այս բոլորը կը կատարուին քարոզելով տարածաշրջանին մէջ խա-

ղաղութիւն հաստատելու ցնորամիտ մօտեցումը, հակառակ որ ակնյայտ է թէ հայութեան թշնամիները իրենց արիւնարբու նկրտումներէն եւ Հայաստանի իսկ հանդէպ յատուկ ախորժակներ դրսեւորելու վարքագիծէն չեն հրաժարած: Հայաստան-թուրքիա սահմանը թուրքիան է փակած եւ կարող է բանալ առանց որեւէ նախապայմանի: ՀՀի կողմէ որեւէ զիջում կամ նախապայման ընդունելի չէ. իրողութիւնը սակայն այլ է. թուրքիան բազմաթիւ նախապայմաններ արդէն առաջադրած է եւ Հայաստանի հետ իր յարաբերութիւնները կը պայմանաւորէ նաեւ Ազգայնականի պահանջներու բաւարարումով:

Դ) Թուրքիան եւ Ազգայնական հակահայ գրոհ

Թուրքիա եւ Ազգայնական այժմ իրենց ախորժակները սրած են Հայաստանի նկատմամբ եւ ծրագրուած, համագրուած հակահայ քարոզչական եւ ցուցական արշաւի են դիմած աշխարհասփիւռ հայութեան դէմ: Հայաստանը անվտանգութեան լուրջ խնդիր ունի. թիրախ է Հայաստանի գերիշխանութիւնը եւ մեր թշնամիները վճռած են հայուն դարձնել անհայրենիք:

Ե) Ազգային արժէքներ

ՀՀ իշխանութիւնները հարուածի տակ առած են ազգային արժէքները, ազգ-բանակ հասկացողութիւնը, հայեցի դաստիարակութիւնը, Ազգային Գիտութիւններու Ակադեմիան, ՀՅԴն եւ հայ եկեղեցին: Ժողովուրդը ազգային գաղափարախօսութենէն հեռացնելով փորձ կը կատարուի անգոյն ու անձեւ զանգուածի վերածելու հայրենի նոր սերունդը: Ամէն գնով պայքարելու ենք այս ապագային ծրագիրներուն դէմ:

Վերոյիշեալներէն անդին՝ Սփիւռքն ալ ունի իր իւրաքանչեւ կարիքները եւ հարցերը: Որպէս համահայկական կազմակերպութիւն, ՀՅԴի համար էական է նաեւ ունենալ կենսունակ, յանձնառու, նպատակաւոր եւ հայկականութեամբ տրոփող կազմակերպ սփիւռք. անհրաժեշտ է յաւելեալ թափ եւ միջոցներ հայթայթել հայ դատի մեր ցանցի արդէն իսկ խիստ արդիւնաւէտ աշխատանքներուն:

ՀՅԴ մեծ ընտանիքը, իր երիտասարդական եւ ուսանողական միութիւններով, ուղեկից միութիւններով, հայ դատի յանձնախումբերով ու գրասենեակներով, ինչպէս նաեւ՝ Դաշնակցութեան քարոզչական, ընկերա-տնտեսական, վերլուծական գրասենեակներով պատնէշի վրայ է ապահովելու հայկական միասնութիւն ի սպաս հայրենիքի ու հայութեան:

Այսօր Սփիւռքը մէկ մարդու նման պարտի փարիլ հայրենիքի պաշտպանութեան սուրբ գործին, անխնայ պայքարիլ Թուրք-Ազգայնական հայատեսաց փանթուրանական ճակատին դէմ, նաեւ դուրս գալ վհատական փորձութենէն եւ անպայմանօրէն փակել հայրենիքի ու Սփիւռքի միջեւ բացուած խրամատը:

Մերելի հայրենակիցներ, Այսօր հայրենիքի եւ Սփիւռքի ազգային գաղափարախօսութեամբ համակուած ոյժերը վճռած են պաշտպանել հայրենի պետականութիւնը, Արցախի պետական կառոյցը, ազգային արժէքները եւ համագոյն շահերը: Համոզուած ենք, որ 2020ի պարտութիւնը լոկ ճակատամարտի կորուստ է եւ ոչ՝ պատերազմի աւարտ: Ազգային ազատագրական պայքարը կը շարունակուի: Ժամանակաւոր պարտութիւններու էջը փակած ենք եւ վերանորոգ թափով շարունակելու ենք ազգային ազատագրական պայքարը մինչեւ յաղթանակ:

Այդ յաղթանակները ուշանալու չեն որովհետեւ մենք, եւ հայ ժողովուրդը առհասարակ, ունինք կամքը, ներոյժը եւ պատրաստակամութիւնը կերտելու ազգային միասնականութիւն եւ վառ ապագայ:

Ձեր վաթսուամեակը շնորհաւոր. Աւստրալիոյ շրջանը, որ վաթսուն տարիներէ ի վեր իր աշխոյժ մասնակցութիւնը կը բերէ հայ կեանքին, վստահաբար յաւելեալ կորովով եւ պինդ վճռակամութեամբ պիտի շարունակէ եւ բազմապատկէ իր մասնակցութիւնը համահայկական մեր նուիրական գործին:







# ԼՈՒՍԱՄԻՈՐԻԶ

ԵԿԵՂԵՑԻՆ ՏԱՆ ՄԷՋ

ԳԱՆԱՏԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ԿՐՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԹԵՐԹ

Է. ՏԱՐԻ, Թիւ 12, Նոյեմբեր 2024



## ԱՌԱՔԵԼԱՀԻՄՆ ՈԳԻՆ ԿՏԱԿԸ

Տօն Ս. Թադէոս եւ Ս. Բարթոլոմէոս առաքելներու: Տօն Հայաստան աշխարհի առաջին լուսատրիչներու: Տօն Հայ Եկեղեցոյ Հիմնադիր Երանելի զոյգին:

Աստուածապարգե մեր կեանքին մէջ ինչպէս չիրճուիք ու չհպարտանանք, երբ Աստուծոյ դէմ յանդիման կը զգանք մենք զմեզ, կը զգանք մնայուն ներկայութիւնը մեր Տիրոջ Յիսուս Բրիստոսի, եւ մանաւանդ, երբ մենք զմեզ կը զգանք առաքելափիմն ապրող եկեղեցոյ մը, ապրող ու գոյատեւող ժողովուրդի մը զաւակը:

Քրիստոսի Համբարձումէն ետք, առաքելները իշխանութիւն ստացան երթալու՝ այդ օրուան ծանօթ աշխարհի ժողովուրդներուն, Աստուծոյ խօսքին թարգմանը հանդիսանալու, ժիր մշակներ դառնալու:

Այո, առաքելները որպէս հաւատարիմ բանբերները Մեծ Վարդապետին, յանձն առին տարածուելու ի սփիտս աշխարհի, հիմը դնելու Քրիստոնէական, ՄԷԿ, ԸՆԴՀԱՆՐԱՎԱՆ ԵՒ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ Ս. ԵԿԵՂԵՑԻՈՅ:

Առաքելական խումբէն երկու հոգի՝ Ս. Թադէոս եւ Ս. Բարթոլոմէոս Հայաստան եկան եւ աստուածգիտութեան լոյսով ողողեցին հայաշխարհը: Երկու վկաները՝ Քրիստոսի երկնային ուժով ամրապնդուած եւ իրենց Վարդապետին պատգամներով գօտեպնդուած, վանեցին կոռուպտութեան խաւարը հայաշխարհէն եւ քաջաբար ցանեցին ճշմարիտ վարդապետութեան առաջին սերմերը, որոնք կամաց կամաց ծլարձակուեցան, ծաղկեցան ու պտղաւորուեցան: Իրենց նահատակութեամբ, մեր եկեղեցոյ առաքելականութիւնը իրել կտակ եւ առաքելութիւն ժառանգեցին:

Հայ եկեղեցին Առաջին Լուսատրիչ երկու առաքելներու եւ զիրենք յաջորդող Հայրապետներուն շնորհիւ, հետեւեցաւ մեծագոյն ուսուցիչին ուսուցումներուն եւ պատգամներուն:

Հայ եկեղեցին եղաւ լոյսի վկայութիւն եւ փառաբանանք: Այդ լոյսը ճառագայթեց հայ կեանքին մէջ, ու այդ լոյսով ստեղծագործեց, պայքարեցաւ ու անմահացաւ:

Այսօր անդրադառնալով իրենց ժառանգած կտակին, վերանորոգենք մեր հաւատքը ճշմարիտ եւ վերալուսատրուինք որպէս քրիստոնէայ եւ հայ:

Եկէք հաղորդուիք առաքելներու կեանքի օրինակով եւ պահպանենք մեր ԱՌԱՔԵԼԱՀԻՄՆ ՈԳԻՆ ու շարունակենք մեր լինելիութեան առաքելութիւնը:

ԲԱՐՔԷՆ ԱՐՔԵՂԻՍԿՈՂՈՍ

## ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

«Գացէք եւ բոլոր ժողովուրդները ինծի աշակերտ դարձուցէք: Չանոնք մկրտեցէք՝ Հօրը, Որդիին եւ Սուրբ Հոգիին անունով: Անոնց սորվեցուցէք այն բոլոր պատմութիւնները, որ ես ձեզի տուի. եւ ահա միշտ ձեզի հետ պիտի ըլլամ, մինչեւ աշխարհի վախճանը» (Մտ 28:19-20):

Այս խօսքերով էր, որ Յիսուս Քրիստոս համբարձելէն առաջ, առաքեց իր աշակերտները իր առաջ:

Պատուիրեց անոնց, որ բոլոր ազգերը իրեն աշակերտ դարձնեն: Քարոզեն ճշմարիտ աւետարանը: Խօսին իրենց ունեցած փորձառութեանց մասին: Դառնան կենդանի վկաները Քրիստոսի ու Անոր աւետարանին:

Աշակերտները գացին, խօսեցան ու վկայեցին կենդանի վկայութեամբ: Քարոզեցին իրենց տեսածներուն մասին: Բաժնեկցեցան իրենց զգացումներն ու ապրումները:

Խաչելութեան եւ Յարութեան միջոցով՝ Յիսուս Քրիստոսի յաղթանակը չարի եւ մեղքի դէմ, ինչպէս նաեւ Աստուծոյ թագաւորութեան հաստատումը՝ Յիսուս Քրիստոսի միջոցաւ, այն բարի լուրն էր, զոր կը քարոզէին Քրիստոսի աշակերտները: Այդ պատճառով ալ Քրիստոսի քարոզութիւնը անուանուեցաւ Աւետարան: Նոր Կտակարանի առաջին չորս գիրքերը կը կոչուին Աւետարան, իսկ գիրքերուն հեղինակները՝ աւետարանիչ: «Աւետարան» յունարէն «Էվանկելիոն» բառի թարգմանութիւնն է, որ կը նշանակէ բարի լուր:

Աւետարանիչները գրեցին Քրիստոսի երկրաւոր առաքելութեան մասին, սակայն միւս առաքելները եւս դարձան ճշմարիտ վկաները այդ աւետարանին: Եղան մէկական շրջող աւետարաններ, որոնց քարոզութեամբ ազգեր ու ժողովուրդներ քրիստոնէայ անունով մկրտուեցան:

Նոյն ձեւով եւ օրինակով՝ առաքելներուն ժառանգորդ առաքելական հայրերը, անոնց աշակերտները եւ մեր հայրապետները եւս նոյն աւետարանը քարոզեցին. Քրիստոսի առաքելներէն իրենց սորվածներուն ու լաւաններուն մասին վկայեցին:

Մեր Քրիստոնէական կեանքի ու աղօթասացութեան կեդրոնական մասը կը կազմէ Աւետարանը: Մեր շարականներուն, աղօթքներուն, մաղթանքներուն ու քարոզներուն հիմնական ներշնչումը Աւետարանն է: Մեր հայրապետները Աւետարանական ճշմարտութիւնները ներմուծած են մեր ծիսակատարութեան մէջ:

Կրնանք հաւատացեալ ըլլալ: Կրնանք միշտ աղօթել: Կրնանք Եկեղեցոյ մէջ մնայուն ներկայութիւն ըլլալ: Այս բոլորը կարելի են եւ անհրաժեշտ, սակայն այս բոլորին կողքին կարելի է նաեւ Աստուածաշունչ ընթերցել:

Օգոստինոս Երանելի կ'ըսէ. «Երբ կ'աղօթես՝ դուն կը խօսիս Աստուծոյ հետ: Երբ Աստուածաշունչ կը կարդաս՝ Աստուած ինք կը խօսի քեզի հետ»:

Աստուածաշունչը պէտք է միշտ բաց մնայ մեր տուններէն ներս: Աւետարանական պատգամներուն ընդմէջէն է նաեւ այն, որ մենք մեր հաւատքը կը սնուցանենք: Իր Աւետարանէն բխող իւրաքանչիւր խօսք՝ ինքնին ճշմարտութիւն մըն է, որ կը մտնէ մեզմէ իւրաքանչիւրին սրտին մէջ եւ կը կերպարանափոխէ զայն: Աւետարանը դարձնենք մեր կեանքի ուղեցոյցը եւ մեր կեանքը դասաւորենք Աւետարանէն բխող ճշմարտութիւններուն հիման վրայ:

Հայր Յակոբ

## ՈՍԿԵՂԷՆ ՀԱՄԱՐ

«Ինչ է հաւատքը: Հաւատք՝ կը նշանակէ վստահ ըլլալ այն բաներուն՝ որոնք կը յուսանք, եւ համոզուած ըլլալ այն բաներուն՝ որոնք չեն երեւիր» (Եբրայեցիս 11:1):

“To have faith is to be sure of the things we hope for, to be certain of the things we cannot see.” (Hebrews 11.1)







### ՄԵՐ ՀԱՅՐԵՐԸ ԿԸ ԽՕՄԻՆ

#### ԱՍՏՈՒԾՈՅ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՏԱՐԵԱԼ ՀԱՒԱՏՔ

1, Երբ Քրիստոս ուզեց իր աշակերտները հաատքով թրծել, Աստուածաշունչին մէջ կը կարդանք, թէ ան ըսաւ. «Ով որ փոքր ծառայութեան մէջ հաատարիմ է՝ մեծին մէջ ալ հաատարիմ է, իսկ ով որ փոքր ծառայութեան մէջ անհաատարիմ է՝ մեծին մէջ ալ անհաատարիմ է» (Ղկ 16.10):

Ինչ է այս փոքրը եւ ինչ է մեծը: Փոքրը այս աշխարհի բարիքներն են, որ Տէրը խոստացաւ տալ իրեն հաատացողներուն, ինչպէս օրինակ՝ առողջութիւն, կերակուր, հազուատ եւ ամէն ինչ, որուն մարմինը որպէս անմիջական կարիք ունի: Եւ Քրիստոս մեզի կը յիշեցնէ, որ այս բաներուն համար մենք պէտք չէ մտահոգուինք, այլ կատարելապէս վստահինք իրեն, որովհետեւ Ինք պիտի ապահովէ բոլոր կարիքները անոնց՝ որոնք իրեն կը դիմեն: Իսկ մեծը, յաւիտենական կեանքի անապական եւ անփուտ պարգեւներն են, որ մեր Տէրը խոստացաւ տալ բոլոր անոնց, որոնք իրեն կը հաատան, անդադրում կերպով կը կատարեն իր սուրբ կամքը եւ իրմէ կը խնդրեն, որովհետեւ ինք թելադրեց, ըսելով. «Նախ դուք խնդրեցէք որ Աստուծոյ արքայութիւնը գայ եւ Աստուած այդ բոլորը աւելիով պիտի տայ ձեզի» (Մտ 6.33): Որպէսզի երկրաւոր ու ժամանակաւոր այս փոքր բաներուն միջոցաւ կարելի ըլլայ քննել ու փորձել իւրաքանչիւր անձ, տեսնելու համար, թէ ան իսկապէս կը հաատայ Աստուծոյ, որովհետեւ Աստուած խոստացաւ մեզի տալ այդ բաները, ուստի մտահոգուելու չենք: Մեր միակ մտահոգութիւնները պէտք է ըլլան՝ գալիք յաւիտենական ճշմարտութիւնները:

2, Արդ, եթէ անձը զօրեղ հաատք ունի (հաատարիմ է) ժամանակաւոր բաներու գծով, ասիկա ցոյց կու տայ անոր ունեցած զօրեղ հաատքը նաեւ անապական ու յաւիտենական (մեծ) երեւոյթներու հանդէպ, եւ թէ ան ինչպէս իրապէս կ'աշխատի՝ խնդրելով յաւիտենական բարիքները ունենալ: Ահա թէ ինչն անհրաժեշտ է, որ Աստուծոյ խօսքին հնազանդող իւրաքանչիւր անձ ինքզինք փորձի եւ քննութեան ենթարկէ եւ կամ թոյլ տայ, որ հոգեւոր մարդիկ օգնեն իրեն այդ մարզին մէջ, որպէսզի ճշմարտապէս գիտնայ, թէ ան որ աստիճանի եւ որքան կը հաատայ Աստուծոյ, ինքզինք ինչ չափով յանձնած է անոր, թէ՛ իր հաատքը որքանով Աստուծոյ խօսքին, համաձայն է, եւ կամ տոկ իր սեփական կարիքին ապահինած՝ կը փորձէ արդարանալ (իր հաատքը կեղծ է), երեւակայելով, թէ ան իր ներսդին հաատք ունի:

Հետեւեալն է հարցումը, որով իւրաքանչիւր մարդ ինքզինք քննութեան կ'ենթարկէ.-

Արդեօք անձը հաատարիմ է փոքր ծառայութիւններուն, այսինքն՝ ժամանակաւոր բաներուն մէջ: Ինչպէս կը կատարուի այս քննութիւնը:

